ՁԵՌԱՄԲ ՆՈՐԻՆ ՄՐԲՈՒԹՅԱՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Ապրիլի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ նշանավոր գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով: ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, արժևորելով Սերգեյ Համբարձումյանի հայրենանվեր գործունեությունը, շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ճանաչված գիտնականին այս պարգևին արժանացնելու համար: «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբափառ կոնդակը: Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանն ընթերցեց Հայրապետական կոնդակը (տե՛ս էջ 6):

Հանդես գալով շնորհակալական խոսքով՝ Սերգեյ Համբարձումյանն ասաց. «Սա իմ կյանքի ամենաթանկ պարգևներից մեկն է: Ինչո՞ւ մեկը և ոչ թե՝ միակը: Մեկը, որովհետև իմ կյանքի ամենամեծ պարգևն այն է, որ ծնվել եմ հայ: Երկրորդ պարգևը ստանում եմ Հայ Եկեղեցուց: Գիտությունը, կրթությունն ու մշակույթը այն երեք ամենամեծ սյուներն են, որոնց վրա կառուցվել է մեր պատմությունը, և դրանց վերևում եղել է մեր Եկեղեցին»:

Այնուհետև օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: «Մեծերին հարգելը, մեծերի վաստակի ու համբավի առջև խոնարհվելը փառք է և՛ տվյալ անհատի, և՛ տվյալ ժողովրդի համար: Կարծում եմ, դա է ճանապարհը նաև, որը պիտի մեզ նոր բարձունքների առաջնորդի, մեզ ոգի և կյանք տա, ապրելու ուժով լցնի»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսության գեղարվեստական մասում իրենց գեղեցիկ կատարումներով հանդես եկան «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտ կատարողները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ